# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> հունվարի 2022թ. N ՄՌ/25-2022

ք. Արմավիր

### <<ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Արմենուհի Տեր-Խաչատրյանի 2022 թվականի հունվարի 21-ի դիմումը.

որոշում եմ

1. <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմենուհի Տեր-Խաչատրյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2022 թվականի փետրվարի 1-ից 14-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմենուհի Տեր-Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Արևհատ Հովնանյանին:
3. Արմենուհի Տեր-Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի փետրվարի 15-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 26.01.2022 12:50:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505